ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/21» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **09.10.2019թ.**
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ՋԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ՋԲՎ ԿՀՄՇՀ բաժնի գլխավոր մասնագետ Ն. Խաչիկյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման, մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման, մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին

(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 26.09.2019թ.-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն **ՀՀ ԱԻՆ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**-ը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /09.09.2019թ./ ունի 229 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

03.10.2019թ-ին հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը և գնումների համակարգողը ծանուցեց մասնակիցն՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը /04.10.2019թ.-08.10.2019թ./ շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

07.10.2019թ.-ին **ՀՀ ԱԻՆ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**-ը ներկայացրել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված **04.10.2019թ.**-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների վերաբերյալ զրոյական տեղեկանք:

1.2 **24.09.2019թ.**-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակցը ուղարկել է վերը նշված փաստաթղթերը:

Մասնակցի կողմից ներկայացված վերոնշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվելուց հետո գնահատվել են հրավերի պայմաններին համապատասխան /բավարար/:

1.3 **09.10.2019թ.**-ին հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **ՀՀ ԱԻՆ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**-ի հայտը գնահատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/21»** ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան, վերջինիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և սահմանված կարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀՄՁԲ-10/21» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀՄՁԲ-10/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 16^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Ն. Խաչիկյան

Գնումները համակարգող Մ.Ամիրյան